

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ



Տ. ԱՐԲԱԿ ԱՎԵՂԱՅ ՍԱՐՈՒԽԱՆԵԱՆ

Աւագանի անունով Արմէն, ծնած է 13 Յուլիս, 1970-ին, Երեւան, Հայաստան: Զաւակն է Կարլէն եւ Ռոզա Սարուխանեաններու:

1977-1987 թթ. սկզբնական կրթութիւնը ստացած է Երեւանի թիւ 73 միջնակարգ դպրոցը:

1985-ին եղած է Արարատեան Հայրապետական թեմի Երիտասարդաց Միութեան անդամ:

1989-1992 թթ. ուսանած է Երեւանի Ճարտարագիտական Համալսարանին մէջ:

1991-1994 թթ. մասնակցած է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Քրիստոնէական Դաստիարակութեան եւ Քարոզչութեան Կեդրոնի կողմէ կազմակերպուած դասընթացներուն:

1994-ին ծառայած է Երեւանի առաջնորդանիստ Ս. Սարգիս եկեղեցւոյ մէջ իբրեւ լուսարար:

1996-ին կը ձեռնադրուի Դպիր եւ կը ծառայէ Երեւանի Ս. Գէորգ եկեղեցւոյ մէջ իբրեւ լուսարար:

1996-1999 թթ. մասնակցած է Գէորգեան Հոգեւոր Ճեմարանի դասընթացներուն իբրեւ ազատ ունկնդիր:

2001-2004 թթ. շարունակելով ուսումը Քահանայից Լսարանին մէջ ձեռնադրուած է Սարկաւագ եւ նշանակուած՝ Նուբարաշէն համայնքի հոգեւոր պատասխանատու:

2006-2010 թթ. դարձեալ ծառայած է Երեւանի Ս. Գէորգ եկեղեցւոյ մէջ իբրեւ լուսարար:

2007-2009 թթ. իբրեւ հոգեւոր սպասաւոր ծառայած է Մոնթէ Մելքոնեանի անուան Ռազմական Համալսարանին մէջ:

2010-2019 թթ. ծառայած է Ս. Յարութեան Տաճարին մէջ իբրեւ ծառայող միաբան:

2019 թ. Նոյեմբեր 17-ին, ձեռնադրուած է կուսակրօն եկեղեցական: